

կենայ, ինքը ծակ մը կը վնտուէ պա-  
հուրտելու :

Այսպիսի յատկութիւն մը յատուկ է  
նաեւ այլ և այլ տեսակ մլուկներու , ո-  
րոնք թէպէտ և այլ և այլ տեսակ անըն-  
դեան որոշեալ են , սակայն հոտերնին  
միշտ մի և նոյն է : Այսպէս են նաեւ կրիա-  
կերպ կարմրուկները , որոնք խաղալիկ  
են տղոց . թէպէտ և հոտերնին առջին-  
ներուն պէս սաստիկ անախորժ չէ :

Եւ որովհետեւ նիւթիս կարգը կը բե-  
րէ , զուրցեմ առանց ճարտասանական  
ձևի , ինչ որ երբեմն պատմուեցաւ ինծի  
մլուկի մը վրայօք : Ասով յայտնի կը  
տեսնուի որ ոչ տաքութեամբ է որ մը-  
լուկը մարդուն վրայ կը յարձկի , այլ  
հոտը առնելով :

Մարդուն մէկը մլուկի մը վրայ փորձ  
ուղելով ընել , ամենեկին անզարդ խու-  
ցի մը մէջ անկողին մը կը դնէ ու ին-  
քը վրան փռուելով մլուկ մը խցին  
մէջ տեղը կը թողու : Մլուկը կը քալէ ,  
կը քալէ , անկողին կը մօտիկնայ , կը  
ճանկրտէ կ'ելլէ կը յարձկի որսին վրայ  
որ իրեն կը սպասէր :

Եթանէ ան ատեն մարդը անկողինը  
սենեկին ձեղունը կը հաստատէ կը կախէ ,  
ու նորէն վրան փռուելով՝ մլուկը խցին  
մէջ տեղը կը թողու : Մլուկը կը պտը-  
տի , կը պտըտի անկողինն չորս կողմը ,  
կը նայի կը վնտուէ . պարապ տեղ ճան-  
կելու տեղ մը չգտնել , անկողինն հաս-  
նելու չկրնար : Երբ ալ կը տեսնայ որ  
ճար չկայ , ճերմակ պատէն վեր կ'ելլէ ,  
վեր , վեր որչափ կրնայ , անկէ ձեղունը  
կ'անցնի , կը հասնի անկողինն անմիջա-  
պէս վրան : Թաթիկները մէյ մը թող  
տուածին պէս , կ'իյնայ ուղղակի անկող-  
նին մէջ մարդուն վրայ :

Աւերորդ է զուրցել որ անկէ ետքը  
այս իրեն խելացիութիւնը իրեն կեան-  
քին կը նստի :

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏԵՆՑ

Հետևևալն ուրիշ տեղում :

Շան կատղասոսթիւնը ձանչնալու  
ստոյգ նշաններ :

(Գաղղիական լրագրէ մը հետեւեալ յօդուածը կը  
քալէնք , օգտակար սեպելով մեր ընթերցողաց  
ուշադրութիւնը այս նիւթիս վրայ արթնցնել ) :

Սոսկալի չարիք մ'է կատաղութիւնն ,  
զոր երբեմն շունք կ'ունենան ինքնաբե-  
րաբար , որուն թեթեւ խաժուածն ալ  
կըրնայ հաղորդել իր թիւնը մարդկանց  
և մեծաւ մասամբ կենդանեաց ալ : Բը-  
ժշկութիւնն այս դարհուրելի հիւան-  
դութեան դարման մը չիճանչնար . տաք  
երկրթով կամ սաստիկ այրող նիւթե-  
րով խարենն եթէ ըստ ժամանակին ըլ-  
լայ , կըրնայ հաղորդութիւնը արգելու  
հիւսուածներն եղժանելով . բայց եթէ  
դարմանն ուշանայ , եթէ կատաղու-  
թեան թոյնը ժամանակ դտնայ ներս  
տողորուելու , անկարելի է անոր ըն-  
թացքը խափանել . և այնուհետեւ սե-  
փական երեղթքը յաջորդաբար այլ և  
այլ երազութեամբ կատարուելով , խեղճ  
մահուամբ մը կը լմննայ : Ուստի նաեւ  
այն բազմաթիւ չարիքներուն մէջէն որ  
մարդուս պահուած կան , քիչ են ա-  
նոնք որ ասոր պէս մարդուս սոսկում  
բերեն , և ուսկից բռնուելէն մարդ խոր-  
չի այսչափ : Այդ զգուշաւորութեան ար-  
դիւնաւորելուն միակ հնարքն է շուտով  
մը հեռանալն այս հիւանդութեան ա-  
ռաջին նշանները տուող կենդանինե-  
րէն . բայց դժբաղդաբար ալ քիչ ծա-  
նօթութիւն ունինք կատաղութեան ըս-  
տոյգ երևութից վրայ , և ուսկից կարծած  
ստոյգ նշաններն պէտք է դնել այն կան  
խակալ կարծեաց կարգը , որք գրեթէ  
միշտ թշուառ հետեւանքներ կ'ունենան :

Պ. Հ. Պուլէյ , Ալֆորդի կենդանա-  
բուժութեան Գպրոցին ուսուցիչն , ու-  
ղեց այս միջոցութիւնները ջնջել , և հա-  
սարակաց կարծիքը շտկել , ճանչցնե-  
լով կատաղութեան բուն նշանները : Պ .  
Պուտէնի և Պ . Պէվիէրի առ ճեմարան  
Բժշկութեան տուած ծանօթութիւնքն  
պատճառ եղան ճեմարանին , որ իր եր-  
կայն փորձառութեանց արգասիքն ալ



ժանուցանէ միաբան . և շատ փափա-  
գելի բան է այս գրուածքս սփռուած  
տեսնալ ամէն դաս մարդկանց մէջ : Այն  
իշխանութիւններն որոնց յանձնուած է  
հասարակաց ապահովութեան և առող-  
ջութեան հոգը , որչափ ալ ուշով քննեն  
այս գրուածքը , աւելորդ չէ :

Այս հիւանդութեան անունն իսկ  
վրիպանաց առաջին աղբիւրն է . կատա-  
ղութիւն ըսելով (որով ռամիկը ստուգա-  
գոյն իմաստ մը կուտան այս անուան) ա-  
մէն մարդ կը զգայ՝ ի բնէ մոլեգնութեան  
և բարկութեան հիւանդութիւն մը . բայց  
մենք կատաղութեան սկզբնական եղա-  
նակին մէջ բոլորովին տարբեր ցոյցեր  
կը տեսնանք . շունն այն ատեն թէպէտ  
խռոված , բայց հեզուկ և գորովալի է  
առ իւր տեսարբը : Նոյն իսկ հիւանդու-  
թեան վերջին եղանակին մէջ , յորում  
կենդանին կը հարկաւորուի իր շրջակայ  
առարկաները խածնելու , այդ բնական  
խածնելու կատաղութիւնն ընդհատ է ,  
մերթ ընդ մերթ հանդարտելով : Ապա  
ուրեմն մոլեգնութիւնն և բարկութիւնն  
երբէք չեն կրնար ըլլալ կարևոր նշանք  
կենդանւոյն կատաղած ըլլալը ճանչնա-  
լու :

Իբրեւ ստոյգ նշան համարուած է նաև  
կոկորդին առատապէս փրփրալը . բայց  
այն ալ ըստ ինքեան իբրեւ նշան չկրնար  
զօրել . վասն զի երբեմն չափազանց լոր-  
ձունք կը վազէ , երբեմն ալ կոկորդին  
բոլորովին չոր կ'ըլլայ , և երբեմն ալ կա-  
նոնաւոր կերպով լորձունք կու գայ :

Բայց չարագոյն հետևանքներն ջրա-  
խուճիւն (hydrophobie) ուսումնական  
անուան , որով կատաղութիւնը ուղեր  
են յատկացնել , կանխակալ կարծիքէն  
առաջ կու գան : Այս բառին կազմու-  
թեանը նայելով՝ կատողած շունն պէտք  
է որ ջրէ վախճայ : Իսկ ամէն օրուան  
փորձը մեզի կը ցուցնէ որ կատողած  
շունն ջրէ չվախնար . թէ որ ջուր տա-  
լու ըլլան , զարհուրած ետ չփախչիր .  
մանաւանդ թէ ընդհակառակն կը լափէ  
լեզուով . քանի որ հիւանդութիւնն ա-  
ռաջ երթալով կոկորդը չէ արգելուած  
կը խրմէ , և մինչև կըլլել չկըրցած

ժամանակն ալ ջուր կը բնտուէ . շատ  
անգամ սաստիկ կատաղութեան միջոց  
տեսնուած է որ բոլոր դունչը մխելով  
ամանին մէջ կը խածաւէ զջուր , որ  
քաշուած կծկած բուկէն վար չերթար :  
Ըստ այսմ շնական ցեղին մէջ իրօք ջրէ  
վախցող չկայ : Կատողած շան լուսէ և  
փայլուն մարմնէ վախնալուն կարծիքն  
ալ՝ այս ըսածներուս կարգէն է :

Սխալ է նաև կարծելն թէ միայն  
տարւոյն աւելի տաք ամսոց մէջ կեն-  
դանիք կը կատողին : Բայց այս կարծիքն  
շատ արմատացած է , այնչափ որ՝ մինչև  
քաղաքական վարչութիւնն ալ զնոյնը  
հաստատուն պահելու համար տարուէ  
տարի սաստիկ տաքութեան միջոց կը  
ժանուցանէ կատողած շանց համար ը-  
րած կանոնադրութիւնքը : Տարւոյն ո՞  
և իցէ միջոց թէ կատողի և թէ կատողե-  
ցնել կ'ըլլայ . և Պ . Ռէյ՝ Լիոնի կեն-  
դանաբուժութեան դպրոցին մէջ , ինչ-  
պէս նաև Պ . Պուլէյ Ալֆորդի դպրոցին  
մէջ , կը հաստատեն՝ թէ աւելի անձ-  
րևտո ժամանակ կատողի կ'ըլլայ :

Ուստի պէտք չէ խաբուիլ . այն նշան-  
ներն որ ընդհանուր կատաղութեան  
բուն նշանք համարուած են , բոլորն ալ  
պարապ են , և անարժան ամենևին հա-  
ւատք ընծայելու : Շուն մը՝ չոր՝ առանց  
փրփուրի բերնով , ջուր խրմելով , հայ-  
լիէ կամ փայլուն թիթեղէ չի վախնա-  
լով և խելօք սիրուն քալելովը հան-  
դերձ կըրնայ կատողած ըլլալ : Բայց կան  
ուրիշ նշաններ , յորոց դիւրաւ կըրնայ  
կատաղութեան հիւանդութիւնը ճանչ-  
ցուիլ . Պ . Պուլէյ այս նշանները պայծառ  
կերպով մը ստորագրած է :

Կատաղութեան սկզբնաւորութեան  
ժամանակները (որ քանի մը օրէ մինչև  
շատ ամիսներ կըրնայ տևել) շունն  
տրտում ու տխուր կ'ըլլայ , տան մութ  
մութ անկիւնները կը քաշուի . դժուա-  
րաւ պատասխան կու տայ , և կարծես  
թէ ցաւելով մ'ալ , տիրոջը ձայնին :  
Կրճկրտած . գրլորած , գլուխը կուրծ-  
քին դրած՝ առջևի թաթերովը կը ծած-  
կէ : Այս անսովոր վայրենութեան վրայ  
քիչ ժամանակէն կ'աւելնայ անհան-



զըստութիւն մը, մէկ շարունակ խռովածութիւն մը, կենդանին անդադար շարժման մէջ կ'ըլլայ. բայց ասոնք դեռ պարզ անհամբերութեան յայտարարներն են, որոց մէջ չկայ մոլեգնութեան և բարկութեան նշմարանք մը: Ընդ հակառակն առ տէրը ունեցած գորովը կը կրկնուի, և երբ հիւանդութիւնն հանդարտ թողու զինքը, կը մօտենայ տիրոջ և սովորականէն աւելի սէր կը ցուցնէ, և կարծես թէ կարեկցութիւն կը խնդրէ իրմէ:

Վերջը կու գայ խելացնոր կատաղութիւն մը. որուն յատուկ է այլանդակ այլանդակ շարժումներ, որոնք կ'իմացընեն թէ կենդանին չեղած բաներ և ձայներ կը տեսնայ և կը լսէ. մերթանշարժ կը կենայ որսի սպասելու պէս, վերջը յանկարծ կը յարձրկի՝ օդուն մէջ բան մը կը խածնէ, ինչպէս առողջ շունը թռած ճանճ մը ուզէ բռնել, մերթ ոռնալով կատաղաբար կը վազէ առաջը բանի մը վրայ և այլն: Այս ցնորքս հարկաւ միշտ նոյն կերպով չեն ըլլար. բայց ինչ որ ալ ըլլայ, մասնաւոր ուշ դնելու է, վասն զի ասոնք են ստոյգ նշանները:

Քիչ վերջը խածնելու պէտքը կը զգայ, բայց դեռ ևս չնշաւոր արարածի չղբաչիր. կենդանւոյն ախորժն կը նուազի, իր սովորական կերակուրէն ամենևին չզրդուիր. այլ անխտիր ինչ որ մօտ գտնայ բոլորովին անսնդարար բաներն ալ ակռաներովը յափշտակելով կը մանրէ ու կը կըլլէ: Անոր համար երբեմն արեան գունով կը փախէ, որովհետեւ այս մարմիններն ներս մտնալով ստամոքսին մէջ վէրքեր կը բանան: Կատաղած շունն խածնելու անհնարին պէտքը իր անձին վրայ կը լեցնէ, յառաջ քան զընտուելը յազուրդ մոլեգնութեանը՝ իր տէրը կամ ճամբուն վրայ հանդիպած մարդիկ. բայց հիւանդ կենդանին դեռ շատ կանուխ ալ վտանգաւոր է. որովհետեւ այն բանն որ դեռ ակամայ չընէր, նոյն իսկ իր հիւանդութեան պատճառաւ կ'ընէ եթէ յանկարծ հակառակութիւն մը կամ չեխել մը ըլլայ:

Կատաղած շան զգայունութիւնն շատ կը նուազի, ինչպէս որ ինք զինքը չարչրելէն ալ կ'իմացուի: Դիտելու է նաև որ շունն ուրիշ յատկութիւն մ'ալ կ'ունենայ այս իր զգայունութիւնը նուազելուն հետ, ցաւոց տակ մունջ կը կենայ: Թէպէտ վշտանայ, ինչպէս որ գէժն ալ կը յայտնէ, բայց որչափ ալ տանջես, ամենևին տրտունջ մը հեծել մը չես լսեր: Կատաղութիւնն կը ճանցուի նաև մէկ շատ հետաքրքրելի յատկութեամբ մը, ըստ որում ախտաճանաչութեան ամենահարկաւոր է. ամէն կատաղած շուն անհնարին բարկութիւն կը զգայ՝ եթէ տեսնայ ուրիշ առողջ շուն մը: Ամենահեզուկ և ամենահանդարտ շունն ալ կը զազանանայ երբ թունաւորուի. հանդիպած շան վրայ կը յարձրկի, և կը խածնէ թէ որ կարենայ: Զարմանալի բան, ամէն կենդանի որ շան խածուածքով կը թունաւորուին, շուն մը տեսածնուն պէս նոյն կատաղութիւնը կը զգան. ինչպէս ձին, եզն, խոյն, նոյն իսկ հասարակ ոչխարն ալ:

Բայց ամենաճիշդ և ամենաստոյգ նշանն շան մը կատաղած ըլլալը իմանալուն հաջուածքն է: Կատաղութեան սեփական է այն հաջուածքն զոր թէ մարդ մէկ մը լսելու ըլլայ, այնպէս կը զգածուի որ բնաւ չկրնար շփոթել զայն:

«Մեղի անկարելի կ'երևնայ, կ'ըսէ Պ. Պուլէյ, կատաղական ոռնալուն ինչ ըլլալն խօսքով հասկըցնելը... Եւ կըրցածնիս միայն այսչափ է որ, կատաղութենէ բռնուած շան հաջուածքին մէջ յայտնի տարբերութիւն մը կայ, թէ ըստ որում գանգիւն՝ և թէ ըստ որում կերպ: Փոխանակ այն սովորական հընչող յստակ ձայնին, նոյնչափ երկարութեամբ և նոյն ուժով հաջելու, խուժ, խուլ կամ քօղաւոր է ձայնն և ամենացած աստիճանն. առաջին կոկորդալիը հաջուածքին անմիջապէս կը յաջորդեն կարգ մը՝ երեք կամ չորս նուաղաձայն վընկվընկներու, զոր կոկորդին խորերէն կը հանէ, և նոյն միջոցը ծնօտքն թերաբաց կը մնան, փոխանակ սովորա-



կանին պէս ամէն անգամ բացուելու գոցուելու ։

Այս զանազան կատաղածութեան նըշանները , որ ըսինք , բուն կատաղութենէ դեռ շատ առաջ կ'ունենայ շունն , որոնք հետզհետէ հիւանդութեան հետ միատեղ կը գորանան : Քիչ ատենուան մէջ չարաչար կը սաստկանան ասոնք . կատաղած շան դէմէն սոսկալի է այն ժաւանակը , աչուրներն մըթնշաղ լուսով մը կը փայլին և արհաւիրք կը շնչեն . կատաղութեամբ ինչ որ գտնայ կը խածատէ . և թէ կարծր բան մը հանդիպի ակռաները կը կոտորտէ առանց ցաւոց ճիչ մը հանելու : Բայց այս կատաղութիւնն երկարատև չէ . մերթ կը հանդարտի կենդանին , և մերթ ալ բոլորովին անզգայ կը դառնայ . յետոյ թուլութիւն մը կը տիրէ վրան . հետզհետէ կատաղութիւնը քիչ անգամ կը բըռնէ . անդամներն

կը տկարանան կը լուծուին , և վերջապէս խեղճութեամբ կը սատկի :

Հիւանդութեան վերջի եղանակին նշաններն այնչափ յայտնի են՝ որ ո՛ր և իցէ մարդ ալ կրնայ ճանչնալ . ուստի հիւանդութեան առաջին եղանակին վրայ , կ'ուզենք Պ. Պուլէյին հետ , դարձը նեղ ամենուն ուշը , յորում կենդանին՝ քալուածքին մէջ մասնաւոր խռովութեան նշան մը չցուցնենք :

Չհաւատանք ուրեմն ջրվախութեան իբրև անվրէպ նշան , երբ անոր հակառակն է ապահով նշանն . բայց զգուշանալք ամէն ժամանակ այն շունէն՝ որ անդադար շարժման մէջ է առանց մասնաւոր վախճանի , որուն ախորժակն գոց է , որուն հաջուածքն տարբեր է , որ ցաւոց մէջ համր կը կենայ , որ չափազանց զտէրը սիրելով՝ սովորականէն աւելի զայրազնոտ է ուրիշ շանց դէմ :

## Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

### Ի ՓՈՔՐ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅՍ

#### Ս Ե Բ Ա Ս Տ Ի Ա

ԵԿԵՂԵՑԻՔ , ԵՒ ՎԵՍՏԱՐԱՆՔ . — Ի շուր և 'ի պարծանս համարեսցի ոչ Սերաստիոյ միայն , այլ և ամենայն Ասիոյ՝ նորաչէն եկեղեցին Աստուածածնի ահեղ մեծութեամբն , հոյակապ բազմազմբէթ և բովանդակ քարաչէն : — Սուրբ Սարգիս , նոյնպէս քարաչէն , այլ փոքր , յորում է գերեզման Ներսեսի կաթողիկոսին Սըսոյ , վախճանելոյ 'ի Ռ.Ղ (1641) : — Սուրբ Վլաս քարաչէն և փոքրիկ : — Են և այլ ևս երեք մատրուներ անշուք . Սուրբ Մինաս , Ամենափրկիչ , և Սուրբ Վլաս , յորում է և գերեզման նորա յաճախեալ յուխտաւորաց յամենայն ազգէ վասն փողացաւի , յորմէ պօղազ եվլիաւը կոչեն զնա տաճիկք : — Եւստուատիոսեանց գերեզմանք երեցունց և եթ՝ առնթեր միմեանց կան 'ի մեծ գերեզմանոցին Տաճկաց , անշուք չիրմօք . իսկ միւս երկոցուն՝ փոքր մի 'ի բացեայ 'ի նոցանէ : — Սև հողեր . այսպէս կոչեն զգերեզմանատունն Հայոց որ է 'ի մէջ քաղաքին , սակս անդ կոխան առնելոյ լէնկթիմուրայ զմանկտին Սերաստիոյ : — Լիճն Սերաստիոյ յորում նահատակեցան քառասուն վկայքն , կոչի Քառասուն մանուկ . սակայն լիճն ցամաքացեալ է այժմ , և յաւանդութենէ միայն գիտեն զտարածու